## «ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5ՄՆՀ» ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**«ՀՀ ԳՄՃՔ 5ՆԴՀ ԳՀԱՊՁԲ-18/01»***

ք. Ճամբարակ «22» փետրվարի 2018թ.

<<Ճամբարակ քաղաքի թիվ **5ՄՆՀ** >> ՀՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Ռ.Դանիելյանի, որը գործում է ____________________-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Սանդրո Քեշիշյան >> ԱՁ-ը, ի դեմս տնօրեն Ս. Քեշիշյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռքբերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտել էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1960000 /Մեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ

գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 3էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

<<Ճամբարակ քաղաքի թիվ 5ՄՆՀ>>
ՀՈԱԿ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.
Ճամբարակ Թումանյան53
ՎՏԲ-Հայաստան Բանկ Ճամբարակի մ/ճ
ՀՀ - 16023003473000
ՀՎՀՀ - 08102424
Տնօրեն՝ Ռ.Դանիելյան
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Սանդրո Քեշիշյան >> ԱՁ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ,
Գ.Նժդեհի 122
<<ՎՏԲ Հայաստան >> բանկ Ճամբարակի
մ/ճ
ՀՀ - 16023004452300
ՀՎՀՀ - 75424829
Տնօրեն՝ Սանդրո Քեշիշյան
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«22» փետրվարի 2018թ. կնքված
**«ՀՀ ԳՄԱՔ ՏՆԴՀ ԳՀԱՊՁԲ-18/01»*** ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1. | 15130000 | Միրգ | - | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 |
| 2. | 15830000 | շաքարավազ | - | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 | 86000 |
| 3. | 15511000 | կաթ խտացրած | - | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| 4. | 15842310 | կարամել | - | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 5. | 15872400 | Աղ | - | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 6. | 15863000 | թեյ | - | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 | 7700 |
| 7. | 15821200 | թխվածքաբլիթ | - | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 |
| 8. | 15540000 | մակարոն | - | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 |
| 9. | 15851100 | բրինձ | - | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 | 67500 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | 15411100 | ծավար/հաճարի / | - | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 | 14300 |
| 12. | 03211300 | Ոսպ | - | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 | 52000 |
| 13. | 15610000 | միս հավի | - | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 | 232500 |
| 14. | 03212211 | միս տավարի | - | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 | 70000 |
| 15. | 03221220 | Ալյուր | - | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 | 7500 |
| 16. | 15610000 | բուսական յուղ | - | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 |
| 17. | 15131500 | Ոլոռ | - | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 18. | 03142500 | Ձու | - | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 19. | 15330000 | Կարտոֆիլ | - | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 | 91000 |
| 20. | 03212100 | վարունգ | - | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 |
| 21. | 03221410 | Պոմիդոր | - | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 22. | 03221111 | Կանաչ լոբի | - | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 23. | 03221112 | Սոխ | - | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 | 5250 |
| 24. | 03221270 | Կաղամբ | - | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 |
| 25. | 03221240 | Ճակնդեղ | - | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 26. | 03221212 | գազար | - | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 | 8750 |
| 27. | 03221113 | Խնձոր | - | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 |
| 28. | 15530000 | հալվա | - | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 | 52500 |
| 29. | 03221300 | Ձմերուկ | - | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30. | 15613300 | Մբրուկ | - | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 31. | 03222321 | պանիր | - | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 32. | 15842300 | կանաչի | - | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 33. | 15331462 | Լոբի հատիկավոր | - | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 34. | 03220000 | Կանաչ բիբար | - | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 | 37500 |
| 35. | 03221000 | Կաթնաշոռ | - | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 36. | 03221210 | Թթվասեր | | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 37. | 03221230 | Չամիչ | | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 |
| 38. | 15542100 | Կարագ | | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 39. | 155123000 | Եգիպտացորենի ձողիկ | | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 | 67000 |
| 40. | 03221212 | Սովորական կաթ | | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 41. | 15332290 | Ջեմ | | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 |
| 42. | 15841000 | Կակաո փոշի | | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 43. | 15613000 | Սպիտակաձավար | | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 | 6500 |
| 44. | 15613000 | Ձավար /հատիկավոր/ | | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 | 16500 |
| 45 | 15131620 | Կիսել | | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| 46 | 15610000 | Հավի կրծկամիս | | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| 47 | 15131620 | Տոմատի մածուկ | | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 48 | 03221210 | Մածուն | | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 | 51000 |

* Վճարման ենթակագումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** Իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

<<Ճամբարակ քաղաքի թիվ 5ՄՆՀ>>
ՀՈԱԿ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.
Ճամբարակ Թումանյանի 53
ՎՏԲ-Հայաստան Բանկ Ճամբարակի մ/ճ
ՀՀ - 16023003473000
ՀՎՀՀ - 08102424
Տնօրեն՝ Ռ.Դանիելյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Սանդրո Քեշիշյան >> ԱՁ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.
Ճամբարակ, Գ.Նժդեհի 122
<<ՎՏԲ Հայաստան >> բանկ
Ճամբարակի մ/ճ
ՀՀ - 16023004452300
ՀՎՀՀ - 75424829
Տնօրեն՝ Սանդրո Քեշիշյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«22» փետրվարի 2018թ. կնքված
N «ՀՀ ԳՄՃՔ ՃՆԴՀ ԳՀԱՊՁԲ-18/01»*
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1. | 15130000 | Միրգ | ՀՀ | Խառը, թարմվիճակում | կգ | 350 | 70000 | 200 | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ Թումանյանի 53 | 200 | 28.12.18թ |
| 2. | 15830000 | Շաքարավազ | ՌԴ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպեսչոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթըպետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-իցոչ պակաս (չորնյութի վրա հաշված): ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 430 | 86000 | 200 | | 200 | 28.12.18թ |
| 3. | 15511000 | կաթ խտացրած | ՀՀ | Շաքարով, խոնավությունը 26.5տոկոսից ոչ ավելի սախարոզը 43.5 տոկոսից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը 28.5-ից ոչ պակաս թթվայնությունը 48 0T-ից ոչ ավելիպիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 տոկոս: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | լիտր | 550 | 11000 | 20 | | 20 | 28.12.18թ |
| 4. | 15842310 | կարամել | ՀՀ | Թարմ, մրգային, տեղական արտադրության 2 տեսակի՝ նաբաթով և միջուկով, խոնավությունը՝ 3.0% ից չ ավելի, թթվայնությունը՝ -3-26: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 1500 | 120000 | 80 | | 80 | 28.12.18թ |
| 5. | 15872400 | Աղ | ՀՀ | էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50*10 մգ/կգ: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 30 | 6000 | 200 | | 200 | 28.12.18թ |
| 6. | 15863000 | թեյ | ՀՀ | Բայխաթեյ սև, տերևներով, գործարանայինփաթեթավորմամբ: ՀՀ գործողնորմերին և | տուփ | 700 | 7700 | 11 | | 11 | 28.12.18թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ստանդարտներին համապատասխան: | | | | | | | |
| 7. | 15821200 | թ խվ ած ք աբ լ ի թ | ՀՀ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը` 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը` 20%-ից մինչև 27%, յուղայնությունը` 3%-ից մինչև 30%: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | 55000 | 1100 | | 1100 | 28.12.18 թ |
| 8. | 15540000 | մակարոն | ՀՀ | Մակարոնեղեն անդրոժ խմորից, չափածրարված: Փաթեթավորումը` գործարանային: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 350 | 70000 | 200 | | 200 | 28.12.18 թ |
| 9. | 15851100 | բրինձ | ՀՀ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, փաթեթավորումը` գործարանային: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 450 | 67500 | 150 | | 150 | 28.12.18 թ |
| 10. | 15612100 | հնդկաձավար | ՀՀ | Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը` 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները` 97,5 % ոչ պակաս, գործարանային պարկերով: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 550 | 38500 | 70 | | 70 | 28.12.18 թ |
| 11. | 15411100 | ձավար/հաճարի/ | ՀՀ | Հատիկավոր: Խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի: Անվտանգությունը և մշակումը ըստ ՀՀ Կառավարության 2007թ. հունվարի 11-ին թիվ 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 550 | 14300 | 550 | | 550 | 28.12.18 թ |
| 12. | 03211300 | Ոսպ | ՀՀ | Հատիկավոր: Խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի: Անվտանգությունը և Հատիկավոր: Խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի: Անվտանգությունը և մշակումը ըստ ՀՀ Կառավարության 2007թ. հունվարի 11-ին թիվ 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:մշակումը ըստ ՀՀ Կառավարության 2007թ. հունվարի 11-ին թիվ 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 650 | 52000 | 80 | | 80 | 28.12.18 թ |
| 13. | 15610000 | միս հավի | ՀՀ | Հավի միստեղականարտադրության, թարմվիճակում: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան | կգ | 1550 | 232500 | 150 | | 150 | 28.12.18 թ |
| 14. | 03212211 | միս տավարի | ՀՀ | Միս տավարի թարմ, առանցոսկորիմսեղիք, զարգացած մկաններով, պահված 6 ժ-ից ոչ ավելի: Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-40C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 2800 | 70000 | 25 | | 25 | 28.12.18 թ |
| 15. | 03221220 | Այուր | ՀՀ | Բարձր տեսակի, փայլուն սպիտակ գույնի, առանց ավելորդ խառնուրդների և հոտի, փաթեթավորումը` | կգ | 300 | 7500 | 25 | | 25 | 28.12.18 թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գործարանային: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան | | | | | | | |
| 16. | 15610000 | բուսական յուղ | ՌԴ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված , փաթեթավորումը՝ շշալցված մինչև 3լիտր տարողություններում: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | լ ի տր | 650 | 130000 | 40 | | 40 | 28.12.18 թ |
| 17. | 15131500 | Ոլոր | ՀՀ | Չորացրած, կեղևած, դեղին գույնի: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխա | կգ | 400 | 6000 | 15 | | 15 | 28.12.18 թ |
| 18. | 03142500 | Ձու | ՀՀ | 1-ին կարգի, Ձու սեղանի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվիպահմանժամկետը 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | հ ատ | 70 | 1300 | 91000 | | 91000 | 28.12.18 թ |
| 19. | 15330000 | Կարտոֆիլ | ՀՀ | I տեսակի, չցրտահարված, առանց արտաքին վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից չ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90 %-ից չ պակաս, փաթեթավորումը՝ կտորի, ցանցի և պոլիմերային պարկերով: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 200 | 160000 | 800 | | 800 | 28.12.18 թ |
| 20. | 03212100 | վարունգ | ՌԴ | I տեսակի, չցրտահարված, առանց արտաքին վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից չ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90 %-ից չ պակաս, փաթեթավորումը՝ կտորի, ցանցի և պոլիմերային պարկերով: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 150 | 15000 | 100 | | 100 | 28.12.18 թ |
| 21. | 03221410 | Պոմիդոր | ՀՀ | Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջինչափերի: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 200 | 20000 | 100 | | 100 | 28.12.18 թ |
| 22. | 03221111 | Կանաչ լոբի | ՀՀ | Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջինչափերի: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 350 | 5250 | 15 | | 15 | 28.12.18 թ |
| 23. | 03221112 | Սոխ | ՀՀ | Ընտիր տեսակի, թարմ, կիսակծու, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 350 | 21000 | 60 | | 60 | 28.12.18 թ |
| 24. | 03221270 | Կաղամբ | ՀՀ | Գլուխ կաղամբ, առանցարտաքինվնասվածքների, չցրտահարված, սովորական տեսակների: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 150 | 30000 | 200 | | 200 | 28.12.18 թ |
| 25. | 03221240 | Ճակնդեղ | ՀՀ | Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջինչափերի: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 250 | 8750 | 35 | | 35 | 28.12.18 թ |
| 26. | 03221212 | գազար | ՀՀ | Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 5-7 սմ, լայնքը՝ 10-12 սմ: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 250 | 12500 | 50 | | 50 | 28.12.18 թ |
| 27. | 03221113 | Խնձոր | ՀՀ | Թարմ վիճակում, մաքուր տեղական ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 350 | 52500 | 150 | | 150 | 28.12.18 թ |
| 28. | 15530000 | հալվա | ՀՀ | ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 1200 | 12000 | 10 | | 10 | 28.12.18 թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29. | 03221300 | Ձմերուկ | ՀՀ | Թարմ, տեղական: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան | կգ | 100 | 5000 | 50 | | 50 | 28.12.18 թ |
| 30. | 15613300 | Սմբուկ | ՀՀ | Թարմ, տեղական: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 300 | 12000 | 40 | | 40 | 28.12.18 թ |
| 31. | 03222321 | պանիր | ՀՀ | Կովի կաթից յուղի զանգվածային մասը 50 տոկոսից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3,5-ից 4,5 տոկոս անվտանգ: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 2500 | 50000 | 20 | | 20 | 28.12.18 թ |
| 32. | 15842300 | կ ան աչ ի | ՌԴ | Թարմ, տեղական: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կ ապ | 2000 | 10000 | 50 | | 50 | 28.12.18 թ |
| 33. | 15331462 | Լոբի հատիկավոր | ՀՀ | Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ 15,1-18,0 տոկոս: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | kg | 1500 | 37500 | 1500 | | 1500 | 28.12.18 թ |
| 34. | 03220000 | Կանաչ բիբար | ՀՀ | Բիբար թարմ օգտագործման տեսակի: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | kg | 300 | 15000 | 50 | | 50 | 28.12.18 թ |
| 35. | 03221000 | Կաթնաշոռ | ՀՀ | 18 և 9 տոկոս յուղի պարունակությամբ թթվայնությունը 210-240 աստիճան T փաթեթավորվածսպառողականտարաներով Բիբար թարմ օգտագործման տեսակի: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան:: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 500 | 10000 | 20 | | 20 | 28.12.18 թ |
| 36. | 03221210 | Թթվասեր | | Անարատկաթից, քաղցրասերուցքայինյուղայնությունը 20 տոկոսիցոչպակաս: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 270 | 81000 | 30 | | 30 | 28.12.18 թ |
| 37. | 03221230 | Չամիչ | | Դեղին չամիչ, կորիզով, թարմ: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 1600 | 16000 | 10 | | 10 | 28.12.18 թ |
| 38. | 15542100 | Կարագ | | Սերուցքային 71,5-82 տոկոսյուղայնությամբ, բարձրորակի, թարմվիճակում, պրոտերժինիպարունակությունը 0,7գ.,ածխաջուր 0,7գ.կկալ: ՀՀգործողնորմերիննստանդարտներինհամապատասխան | կգ | 3350 | 67000 | 20 | | 20 | 28.12.18 թ |
| 39. | 155123000 | Եգիպտացորենի ձողիկ | | Թարմ, չոր ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | հատ | 200 | 24000 | 120 | | 120 | 28.12.18 թ |
| 40. | 03221212 | Սովորական կաթ | | Պաստերացված կովի կաթ 3.2 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21 T, չափածրարվածպլաստմասաե 1 լ.տարաներում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | լիտր | 550 | 27500 | 50 | | 50 | 28.12.18 թ |
| 41. | 15332290 | Ջեմ | | Աղացած խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի: Անվտանգությունը և մշակումը ըստ ՀՀ Կառավարության | հատ | 1000 | 20000 | 20 | | 20 | 28.12.18 թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2007թ. հունվարի 11-ին թիվ 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | |
| 42. | 15841000 | Կակաո փոշի | | Բնական, դարչնագույն փոշի հատիկների կևեղի ներառումով, համը դուրեկան: Անվատանգությունը Ըստ 2-III-4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների | տուփ | 650 | 6500 | 10 | | 10 | 28.12.18 թ |
| 43. | 15613000 | Սպիտակաձավար | | Աղացած խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի: Անվտանգությունը և մշակումը ըստ ՀՀ Կառավարության 2007թ. հունվարի 11-ին թիվ 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 550 | 16500 | 30 | | 30 | 28.12.18 թ |
| 44. | 15613000 | Ձավար /հատիկավոր/ | | Հատիկավոր: Խոնավությունը 15 տոկոսից ոչ ավելի: Անվտանգությունը և մշակումը ըստ ՀՀ Կառավարության 2007թ. հունվարի 11-ին թիվ 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 700 | 10 | 7000 | | 7000 | 28.12.18 թ |
| 45. | 15131620 | Կիսել | | Բնական, դարչնագույն փոշի հատիկների կևեղի ներառումով, համը դուրեկան: Անվատանգությունը Ըստ 2-III-4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների | հատ | 100 | 5000 | 50 | | 50 | 28.12.18 թ |
| 46. | 15610000 | Հավի կրծկամիս | | Հավի միստեղականարտադրության, թարմվիճակում: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան | կգ | 1700 | 51000 | 30 | | 30 | 28.12.18 թ |
| 47. | 15131620 | Տոմատի մածուկ | | Բարձր տեսակի ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ապակե տարաններով: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործողնորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 1000 | 20000 | 20 | | 20 | 28.12.18 թ |
| 48. | 03221210 | Մածուն | | Թարմ կովի կաթից յուղայնությունը 3 տոկոսից ոչ պակասթթվայնությունը 65-1000T Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | 550 | 16500 | 30 | | 30 | 28.12.18 թ |

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**

<<Ճամբարակ քաղաքի թիվ 5ՄՆՀ>> ՀՈԱԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Սանդրո Քեշիշյան >> ԱՁ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի 122